«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՎ 6

# ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

## ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

«ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՎ 6

# ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

## ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2006

# Բովանդակություն


**Երկու խոսք** . . . . . 5

**Ներածություն** . . . . . 7

**Իրավիճակի ընդհանուր վերլուծություն** . . . . . 9

**Խնդրի արդիականությունը** . . . . . 11

**Նպատակը և սկզբունքները** . . . . . 15

**Առաջարկվող ուղղությունները** . . . . . 16

**Առաջարկվող մեխանիզմները** . . . . . 23

**Հավելվածներ** . . . . . 27

Աղյուսակ 1. Հայաստանի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ . . . . . 29

Աղյուսակ 2. Տնտեսության հիմնական ճյուղերը . . . . . 30

Աղյուսակ 3. Անվանական ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ ծախսային բաղադրիչների . . . . . 31

Աղյուսակ 4. Վճարային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար) . . . . . 31

Աղյուսակ 5. Ներմուծումն ըստ հիմնական գործընկեր երկրների (մլն ԱՄՆ դոլար) . . . . . 32

Աղյուսակ 6. Արտահանումն ըստ հիմնական գործընկեր երկրների (մլն ԱՄՆ դոլար) . . . . . 33

Աղյուսակ 7. Ներմուծումն ըստ հիմնական ապրանքատեսակների (մլն ԱՄՆ դոլար) . . . . . 33

Աղյուսակ 8. Արտահանումն ըստ հիմնական ապրանքատեսակների (մլն ԱՄՆ դոլար) . . . . . 34

Գծանկար 1. Ապրանքների և ծառայությունների արտահանումը և ներմուծումը (ՀՆԱ-ի նկատմամբ) . . . . . 34

Գծանկար 2. Արտահանման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի . . . . . 35

Գծանկար 3. Արտահանման կառուցվածքն ըստ երկրների . . . . . 35

## Երկու խոսք

Հայաստանում ժողովրդավարության հաստատումն ու իրավական պետության կառուցումը ոչ թե առանձին մարդկանց ցանկության կամ նախասիրության հարց է, այլ պատմական օրինաչափություն, մեր ազգի առջև ծառացած ընթացիկ և համազգային ռազմավարական նշանակության խնդիրների լուծման միջոց ու նախապայման: Սակայն այդ ճանապարհը դյուրին չէ. այն պահանջում է մեծ ջանքերի ներդրում, ծրագրված և հետևողական աշխատանք: Այս առումով կարևորվում են ազգային գերակայությունների վրա հիմնված ռազմավարական ծրագրերի մշակումը և դրանց հետևողական իրականացումը:

Հ. Յ. Դաշնակցությունը, հավատարիմ իր Ծրագրից բխող ազգային գաղափարախոսության սկզբունքներին, Հայաստանի համընդհանուր զարգացման և հզորացման ռազմավարական գերխնդիրների լուծման հարցերում պատրաստ է ստանձնել համարժեք պատասխանատվություն և բերել իր ակտիվ մասնակցությունը: Այս համատեքստում առաջարկվող «Արտահանման խրախուսման ազգային ռազմավարական ծրագիրը» Հայաստանի տնտեսության զարգացման գերխնդրին ուղղված քայլերից մեկն է: Այն բխում է Հ. Յ. Դաշնակցության գաղափարախոսությունից, երաշխավորում է այնպիսի տնտեսական առաջադրանքների լուծումը, ինչպիսիք են ժողովրդի բարօրության ապահովումը, ընկերային արդարության հաստատումը և այլն:

Նման ծրագրերը, ընդհանրապես, լուրջ նախապայմաններ են ստեղծում մտավոր, հոգևոր, նյութական համազգային-համապետական կարողությունների կենտրոնացման, դրանց առավել արդյունավետ օգտագործման համար, առանց որոնց ազգային-պետական-հասարակական կյանքի ակնկալվող զարգացումն ու հետագա վերելքն անհնար է պատկերացնել:

Առաջնորդվելով այս տրամաբանությամբ՝ Հ.Յ.Դ. կողմից ավելի քան մեկ տարի առաջ նախաձեռնվեց «Արտահանման խրախուսման ազգային ռազմավարական ծրագրի հայեցակարգի» մշակման աշխատանքը, որին մասնակցեցին Հայաստանի և Սփյուռքի մի շարք մասնագետներ:

Փաստաթղթի նախագիծը տպագրվել էր «Երկիր» շաբաթաթերթում՝ հավելվածի տեսքով, տեղադրվել www.yerkir.am կայքում, ինչպես նաև ներկայացվել շահագրգիռ պետական մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, գիտական-կրթական հաստատությունների ուշադրությանը՝ փաստաթղթի վերաբերյալ առաջարկություններ ստանալու ակնկալիքով:

Փաստաթղթի նախագծի վերաբերյալ կարծիքներ, տեսակետներ և առաջարկություններ են ստացվել ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունից, ՀՀ էներգետիկայի նախարարությունից, ՀՀ Կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեից, Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտից, Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետից, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնից, Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտից, Միջազգային խաղաղականության հետազոտության հայկական խմբից, «Արմենիա 2020» ծրագրից, ինչպես նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունից, որոնց համար հայտնում ենք մեր շնորհակալությունը: Ներկայացված տեսակետներն ու առաջարկությունները հնարավորինս հաշվի են առնվել փաստաթղթի լրամշակման գործընթացում:

Ներկայում «Աղքատահանման խրախուսման ազգային ռազմավարական ծրագրի հայեցակարգը» ներկայացվում է հասարակության, Սփյուռքի, Հայաստանում գործող միջազգային կառույցների և զարգացման գործակալությունների լայն քննարկմանը՝ կարևորելով ծրագրի վերածումը մասնակցային ազգային ծրագրի կամ համընդհանուր պաշտոնական, ինչպես նաև ՀՀ Կառավարությանը՝ առ ի քննարկում և գործադրում:

***Հայ Յեղափոխական Դաշնակցության***

***Հայաստանի Գերագույն մարմին***

## Ներածություն

1. Նախորդ դարի հայտնի աշխարհաքաղաքական փոփոխությունների հետևանքով այսօր Հայաստանը բախվում է նոր մարտահրավերների: Ժողովրդավարական և իրավական հասարակության կառուցումը հրամայական է զարգացած աշխարհին համընթաց շարժվելու և ուրույն տեղ գրավելու առումով: Այս գործընթացը պահանջում է ռեսուրսների և հարստության ներդրում: Մինչդեռ ներքին տնտեսական և սոցիալական ռեսուրսների ներկա մակարդակը, դրանց կազմակերպվածության և արդյունավետության աստիճանը բավարար չեն առկա խնդիրների հետագա արդյունավետ և արագ լուծումն ապահովելու համար:

2. Հայաստանը կանգնած է աղքատության, անհավասարության, կոռուպցիայի և վատ կառավարման, միջազգային շուկաներում անմրցունակության հիմնախնդիրների առջև: Սրանք վտանգում են երկրի կայունությունը, ազգային անվտանգությունը և խոչընդոտում ժողովրդավարության ձևավորմանը:

3. ՀՀ Կառավարության կողմից բարեփոխումների իրականացման և տնտեսական զարգացման պարտավորվածության, միջազգային կազմակերպությունների լայնածավալ աջակցության, հին և նոր Սփյուռքի օժանդակության շնորհիվ Հայաստանի տնտեսությունը հաղթահարեց 1990-ականների առաջին կեսի տնտեսական ճգնաժամը. սկսվեց տնտեսական զարգացումը: 1994 թվականից շարունակաբար գրանցվող տնտեսական աճի բարձր տեմպերի արդյունքում 2004 թվականին ՀՆԱ-ն գերազանցեց 1990 թվականի մակարդակը, սակայն արդեն սոցիալական և տնտեսական անհավասարության չափազանց բարձր, ահազանգող պայմաններում:

4. Տնտեսական զարգացման բարձր մակարդակը և տնտեսական աճի առաջանցիկ տեմպերը Հայաստանում էլ ավելի են կարևորվում տարածաշրջանային անկայունության և հարևան երկրների հետ լարված ու դժվարին փոխհարաբերությունների համատեքստում: Տնտեսական զարգացման բարձր մակարդակը և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի բարձր ցուցանիշը որոշիչ են ինչպես դիվանագիտության և ռազմատնտեսական քաղաքականության իրականացման գործընթացներում, այնպես էլ համաշխարհային ինտեգրման առումով:

5. Դեռևս 1998 թվականին ՀՀ Կառավարությունը, որպես տնտեսական քաղաքականության նպատակ, որդեգրեց տնտեսական աճի ապահովումը: 2003 թվականին ՀՀ Կառավարությունն ընդունեց «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը», որով ստանձնեց պատասխանատվություն հաղթահարել երկրում աղքատությունը և ապահովել տնտեսական զարգացումը: Նշված ծրագրում նույնպես ՀՀ Կառավարությունը աղքատության հաղթահարման հիմնական միջոց է ընդունում տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումը:

6. Տնտեսական աճի ապահովման համար կարևոր գործոն է շուկաների առկայությունը և պահանջարկը: Հատկապես փոքր երկրի համար կարևորվում են արտաքին շուկաները: Համաշխարհային շուկաներ ներխուժման ընդլայնումը և արտահանման աճը տնտեսական աճի հետագա ապահովման կարևոր գործոններ են: Հայաստանում արտահանման խրախուսումը ստանում է ռազմավարական նշանակություն: Արտահանման աճը կնպաստի ոչ միայն տնտեսական զարգացմանը և զբաղվածության աճին, այլև համաշխարհային ինտեգրմանը, Հայաստանի պատմության ճանաչման ընդլայնմանը, մշակութային և տեխնոլոգիական զարգացմանը, ներքին կարողությունների և փորձառության աճին:

7. ՀՀ Կառավարության գործունեության ծրագրում ամրագրված է, որ արտահանման խրախուսումը Կառավարության տնտեսական քաղաքականության գերակայություններն է: Սակայն մինչ այժմ չի մշակված տվյալ գերակայության ապահովման գործողությունների և միջոցառումների ամփոփ միասնական փաթեթ: «Արտահանման խրախուսման ազգային ռազմավարական ծրագիրը» կոչված է դառնալու ՀՀ Կառավարության արտահանման խրախուսման գերակայության ապահովման մեխանիզմ և ներկայացվում է Կառավարության քննարկմանը, հաստատմանը և իրականացմանը:

8. Արտահանման խրախուսման ռազմավարական ծրագրերի մշակման և իրականացման միջազգային փորձը բավականին ընդգրկուն է: Դրանք ներդրվել և ներկայում գործում են մի շարք զարգացած և զարգացող, այդ թվում՝ անցումային երկրներում: Նման ծրագրերը հաճախ իրականացվում են միջազգային կառույցների, այդ թվում՝ նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ:

## Իրավիճակի ընդհանուր վերլուծություն

9. Հայաստանը դեպի ծով ելք չունեցող, լեռնային, բնական ռեսուրսներով ոչ հարուստ, փոքր երկիր է: Խորհրդային տարիներից Հայաստանը ժառանգել է գիտության, կրթության, մշակույթի, սոցիալական և այլ ծառայությունների զարգացած ենթակառուցներ և տարածաշրջանում հիմնականում առանձնանում է մարդկային կապիտալի զարգացման բարձր մակարդակով և աշխարհասփյուռ ակտիվ և գործուն Սփյուռքով: 1988 թվականի ավերիչ երկրաշարժը, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման հետևանքով Ադրբեջանի հետ հակամարտությունը, Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակումը գումարվեցին Խորհրդային Միության փլուզման հետևանքներին, որի պատճառով տնտեսական և քաղաքական անցում կատարող նորանկախ Հայաստանը 1991-1993 թվականներին խորը տնտեսական անկում ապրեց. ՀՆԱ-ն կրճատվեց շուրջ 50 տոկոսով, արդյունաբերությունը՝ 60 տոկոսով:

10. 1994 թվականից սկսվեց տնտեսական վերականգնումը, 1995-2003 թվականների ընթացքում իրական ՀՆԱ-ն կրկնապատկվեց, և արդեն 2004 թվականի ընթացքում արտադրված ՀՆԱ-ն իրական արտահայտությամբ 11 տոկոսով գերազանցեց 1990 թվականի մակարդակը[1]: Վերջին տասը տարվա տնտեսական աճի միջին ցուցանիշը կազմում է 7.9 տոկոս, իսկ հինգ տարվանը՝ 10.5 տոկոս: Աճը սկզբնական փուլում ապահովվում էր տնտեսության սահմանափակ (հիմնականում՝ ծառայություններ և առևտուր) ճյուղերի հաշվին, մինչդեռ ավելի ուշ ընդլայնվեցին գրեթե բոլոր՝ հատկապես արդյունաբերության ճյուղերը և կապիտալ շինարարությունը:

11. Կոռուպցիան, հովանավորչությունը, ռեսուրսների և հարստության բաշխման անհավասարությունը տնտեսական անցման դեռևս սկզբնական փուլերից հանգեցրին եկամուտների ձևավորման և բաշխման խիստ անհավասարության: 1998-1999 թվականների տնային տնտեսությունների հետազոտությունը Հայաստանում փաստեց աշխարհում եկամուտների անհավասարության ամենաբարձր ցուցանիշը. Ջինի գործակիցը կազմեց մոտ 0.6: Այս նույն հետազոտության[2] համաձայն աղքատությունը կազմեց 55.1 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատությունը 22.9 տոկոս: Հետագայում բարձր տնտեսական աճը փոքր-

1 Այստեղ և այսուհետ ներկայացվող տվյալները վերցված են http://www.edrc.am/project.html?cat-id=38 ինտերնետային հանգույցից, եթե առանձին նշում կամ հղում չի բերվում:

2 Տե՛ս ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական զեկույցները:

ինչ մեղմեց աղքատությունը. 2003 թվականի հետազոտության տվյալներով աղքատությունը կազմեց 42.9 տոկոս:

12. Չնայած բարձր տնտեսական աճին՝ տնտեսության մեջ ցածր է ներքին խնայողությունների մակարդակը. միայն 2002 թվականից ՀՆԱ-ն գերազանցեց ամբողջական սպառումը: Ներքին համախառն ներդրումները 2003 թվականին կազմեցին ՀՆԱ-ի 21.7 տոկոսը, իսկ ընթացիկ հաշվի բացասական մնացորդը, առանց պաշտոնական տրանսֆերտների, կազմում է ՀՆԱ-ի 8.9 տոկոսը:

13. Տնտեսական կայունացումը, շուկաների և առևտրային պայմանների ազատականացումը նպաստեցին նաև արտաքին ապրանքաշրջանառության ընդլայնմանը: Ապրանքաշրջանառության ծավալները[3] 2003 թվականին 1.9 անգամ գերազանցեցին 1995 թվականի մակարդակը, և կազմեցին 1826.3 մլն ԱՄՆ դոլար: Ընդհանուր ապրանքաշրջանառության միայն 38.1 տոկոսը կամ 696.1 մլն ԱՄՆ դոլարն է կազմում արտահանումը: Արդյունքում առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը 2003 թվականին կազմեց ՀՆԱ-ի 15.5 տոկոսը, որը 2000 թվականի նկատմամբ նվազել է 8.8 տոկոսային կետով:

14. 2000-2003 թվականներին ապրանքների և ծառայությունների արտահանումն աճել է շուրջ 2 անգամ կամ ՀՆԱ-ի 23.4 տոկոսից դարձել 32.2 տոկոս, ինչի շնորհիվ արտահանման աճը պայմանավորել է 2000-2003 թվականների կուտակային տնտեսական աճի շուրջ 70 տոկոսը՝ 2000-ին ապահովելով տնտեսական աճի մոտ 66, իսկ, այնուհետ նվազելով, 2003-ին՝ 60 տոկոսը:

15. Հայաստանի հիմնական առևտրային գործընկերներն են Ռուսաստանը, Բելգիան և Իսրայելը, սակայն այս երկրների հետ նույնպես արտահանման ծավալները զիջում են ներմուծմանը: 2003 թվականի դրությամբ արտահանման հիմնական ապրանքախմբերն էին թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը և մետաղները (51.1 տոկոս), ոչ թանկարժեք մետաղները (13.2 տոկոս), պատրաստի սննդի արտադրանքը (10.5 տոկոս), հանքահումքային ապրանքները (7.4 տոկոս) և այլն (տե՛ս Հավելված 3): Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտահանումը հիմնականում ուղղված է Իսրայել և Բելգիա, արտահանման այս ճյուղը հիմնված է վերաարտահանման վրա, այսինքն՝ իրականում տեղի է ունենում հումքի ներմուծում, Հայաստանում դրա մշակում և կրկին արտահանում:

3 Ըստ վճարային հաշվեկշռի վիճակագրության արտահանումը կրեդիտ գրանցմամբ, ներմուծումը՝ դեբետ գրանցմամբ:

16. Առանց այս ապրանքախմբի արտահանումը[4] 2003 թվականին կազմել է 334.9 միլիոն դոլար, որը 2000 թվականի նկատմամբ աճել է 87.1 տոկոսով՝ նույն ժամանակահատվածի 41.2 տոկոս կուտակային տնտեսական աճի պայմաններում:

## Խնդրի արդիականությունը

17. Վերջին տարիների բարձր տնտեսական աճի միտումը, որը հիմնականում վերականգնողական բնույթ ունի, Հայաստանի տնտեսությունն ըստ էության արագ տեմպերով մոտեցնում է իր արտադրական հնարավորությունների ներկայի պոտենցիալ մակարդակին: Արդյունաբերության հիմնական ճյուղերը, բացառությամբ ծանր արդյունաբերության և ծառայությունների, գերազանցում են 1990 թվականի մակարդակը: Մյուս կողմից՝ 2001 թվականի մարդահամարի արդյունքներով Հայաստանի բնակչությունը 1990 թվականի համեմատ կրճատվել է ավելի քան 30 տոկոսով: Ստացվում է, որ մի կողմից արդյունաբերության հիմնական ճյուղերը գրեթե մոտենում են խորհրդային տարիների առավելագույն սահմաններին, իսկ մյուս կողմից սպառողական ներքին պահանջարկի պոտենցիալ մակարդակն առնվազն չի կարող գերազանցել խորհրդային մակարդակը: Եթե հաշվի առնենք նաև, որ խորհրդային տարիների համեմատ տնտեսության բացվածության հետևանքով այսօր մեծ է և աճի միտում ունի ներմուծումը, ապա կարելի է եզրակացնել, որ տնտեսության հիմնական ավանդական ճյուղերը, առանց տեխնոլոգիական վերափոխման և նոր շուկաների ներգրավման, այսօր մեծ աճի հեռանկարներ չունեն:

18. Արդյունաբերական ճյուղի համախառն ավելացված արժեքը 2004-ին 1990 թվականի մակարդակին զիջել է ընդամենը 25 տոկոսով: Մինչդեռ Խորհրդային Հայաստանի արդյունաբերական արտադրանքի մեծ ծավալները 1990 թվականին պայմանավորված էին նախկին խորհրդային շուկաներ արտահանման մեծ ծավալներով: Միաժամանակ ներկայում արդյունաբերական հզորությունների մեծ մասը տնտեսապես անարդյունավետ են:

19. Պոտենցիալ ներքին պահանջարկ կա կուտակված սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերում՝ պայմանավորված երկրում աղքատ և ցածր եկամուտ ունեցող մեծաթիվ բնակչության զսպված սպառո-

4 Արտահանումը բերված է FOB գներով, ներմուծումը՝ CIF գներով:

մով, որի եկամուտների հնարավոր աճը կարող է հանգեցնել ներքին արտադրության ընդլայնման և տնտեսական աճի: Արդյունաբերության մյուս հիմնական ենթաճյուղերը ներքին շուկայի ընդլայնման մեծ հնարավորություններ չունեն:

20. Այսպիսով, տնտեսական աճի ներքին աղբյուրները սահմանափակվում են, և, եթե չիրականացվեն համապատասխան միջոցառումներ, տնտեսական աճը 2005-2010 թվականներին զգալիորեն կարող է նվազել: Հայաստանում հետագա տնտեսական աճի հիմնական աղբյուրը դառնում է արտաքին պահանջարկը, և արտահանման խրախուսմանն ուղղված միջոցառումները դառնում են քաղաքականության գերակայություն:

21. Արտադրական հնարավորությունների պոտենցիալին մոտենալուն զուգընթաց կարևորվում է արտադրողականության հետագա աճի ապահովման խնդիրը, և այս պարագայում ևս էական նշանակություն է ստանում արտահանումը: Արտահանումը ենթադրում է, որ տնտեսությունը կամ գոնե նրա որոշ ճյուղեր մրցունակ են արտաքին շուկաներում: Մրցունակության պահպանման համար արտահանող տնտեսվարող սուբյեկտները ստիպված են կիրառել հնարավոր բոլոր միջոցները՝ արտադրողականության աճի ապահովման համար:

22. Ժամանակակից աշխարհում, հատկապես փոքր շուկա ունեցող երկրների համար, զարգացման ճանապարհը միջազգային ինտեգրումն է: Այսօր տնտեսական զարգացման և բարձր մրցունակության չափանիշներ և երաշխիքներ չեն համարվում երկրի՝ բնական ռեսուրսներով հարստության աստիճանը կամ Կառավարության կողմից ներքին տնտեսության պաշտպանությունը և սուբսիդավորումը:[5] Միջազգային արդի փորձը ցույց է տալիս, որ գիտության, տեղեկատվության, արդյունավետության մրցակցային առավելություններն են երկրի զարգացման իրական երաշխիքները: Հայաստանի համար սա ամբողջովին իրատեսական է և պետք է հիմնաքարային լինի մշակվող քաղաքականությունների և «Արտահանման խրախուսման ազգային ռազմավարական ծրագրի» համար:

23. Այսպիսով, արտահանման աճը երկրի զարգացման համար գերպահանջ է, որը տարբեր սոցիալական, մշակութային և տնտեսական դրական դրսևորումներ և ազդեցություններ կարող է ունենալ: Դրանցից մասնավորապես հարկ է առանձնացնել հետևյալները.

5 Michael Porter, The competitive advantage of Nations, 1990, page 21

- **Հեռագա տնտեսական աճի հիմնական աղբյուր:** Հայաստանի տնտեսական աճի դասմության վերլուծությունը ցույց է տալիս, որ աճը պայմանավորված է հիմնականում դրամական փոխանցումներով։ Հայաստանում դեսական կարիտալ ծախսերի (Լինսի ծրագիր և այլն), արտաքին տրանսֆերտների, գործոնային եկամուտների և արտաքին օժանդակության աճը հանգեցրին տնտեսության առանձին ճյուղերում բարձր տնտեսական աճի, որը հեռագայում ընդլայնվեց նաև մյուս ճյուղերում։ Սակայն սրանք, ըստ էության, կայուն, դերմանենտ երևույթ չեն և նվազման միտում ունեն։ Ներքին մասնավոր դրամական փոխանցումների աճը ունի որոշակի սահմանափակումներ և կարճ ժամանակահատվածում չի կարող զգալիորեն աճել։ Ներքին դրամական փոխանցումների աճը կամ դրա արագացումն ավելի դահդանողական գործընթաց է։ Հետևաբար, փոքր տնտեսություններում էական նշանակություն է ստանում արտաքին դրամական փոխանցումները, որը, ըստ էության, Հայաստանի տնտեսության համար անսահմանափակ մեծություն է։ Արտահանման ընդլայնումը կբերի նաև նոր տեխնոլոգիաների ներդրման դահանջին, որի արդյունքում կընդլայնվի նաև արտադրական դոտենցիալը և մրցունակությունը։ Այսդիսով, արտաքին դրամական փոխանցումները Հայաստանում երկարաժամկետ հատվածում տնտեսական բարձր աճի միակ և հիմնական աղբյուրն է։

- **Մասշտաբի էֆեկտ և հզորությունների արդյունավետ օգտագործում:** Հայաստանի շուկան չափազանց փոքր է առանձին արտադրությունների կազմակերպման և արտադրական հզորությունների գործարկման համար։ Դեռևս Խորհրդային Միությունից ժառանգած որոշ արտադրական հզորություններ, մասնավորապես՝ ֆիզիկական արտադրության, հանքարդյունաբերող և հարստացնող ձեռնարկություններ, ի սկզբանե նախատեսված էին ոչ միայն Հայաստանի դրամական փոխանցումները բավարարելու համար։ Այսինքն՝ ներքին շուկան բավականին փոքր է, և տնտեսապես արդարացված չէ առանձին արտադրությունների և արտադրական հզորությունների գործարկումը։ Շուկաների ընդլայնումը կնպաստի առանձին արտադրությունների արդյունավետության բարձրացմանը և առկա արտադրական հզորությունների գործարկմանը։

- **Գիտության, նորարարությունների և նոր տեխնոլոգիաների զարգացում, արտադրողականության աճ:** Արտաքին շուկաներում մրցակցությանը դիմակայելու նպատակով արտահանողները ստիպված կլինեն մեծ ուշադրություն դարձնել ներքին տնտեսության մեջ գիտության և նոր տեխնոլոգիաների զարգացմանը, որպեսզի կարողանան ապահովել արտադրողականության, տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացում։ Գիտական և տեխնոլոգիա-

կան ճյուղերի նկատմամբ իրական շուկայական պահանջարկի աճը և ներդրումները կնպաստեն այս ճյուղերի առաջանցիկ զարգացմանը: Տնտեսական այս ենթակառույցների զարգացումը կապահովի Հայաստանի երկարաժամկետ առաջընթացը և տնտեսական աճի կայունությունը:

- **Գործազրկության կրճատում և աշխատավարձերի միջին մակարդակի աճ:** Արտահանող ճյուղերի աճը և ՀՆԱ-ի նկատմամբ արտահանման մեծ կշիռը, ըստ էության, նշանակում է, որ տնտեսության արտադրական ճյուղերում աճում են մրցունակ արտահանելի (tradeable) ճյուղերը: Մրցունակ ճյուղերի թողարկած ապրանքների նկատմամբ պահանջարկը կհանգեցնի աշխատանքային ռեսուրսների նկատմամբ պահանջարկի աճի: Հետևաբար նվազում է գործազրկությունը և բարձրանում են այս ճյուղերում զբաղված ռեսուրսների մրցունակությունը և աշխատավարձերը: Մրցունակ ճյուղերում աշխատավարձերի մակարդակը բարձր է, հետևաբար արտահանման ընդլայնումն ազդեցություն կունենա նաև ներքին տնտեսության այլ ճյուղերում աշխատավարձերի և պահանջարկի հետագա աճի վրա:

- **Արտաքին արժութային պահուստների աճ:** Հայաստանն առաջիկա տարիների ընթացքում արտաքին պարտքի մարման բավականին մեծ պարտավորվածություն ունի: Արտահանման աճը, հասկանալի է, որ կբերի արտարժույթի ներհոսքի և պահուստների աճի: Հայաստանի՝ որպես պարտք սպասարկող երկրի համար արտահանման ընդլայնումն առավելապես կարևորվում է:[6]

- **Համաշխարհային ճանաչում:** Հայտնի է, որ երկիրը ճանաչվում է ոչ միայն իր պատմությամբ և մշակույթով, այլև իր արտադրանքով: Ավելին, փոքր և զարգացող շատ երկրներ այսօր ավելի շատ ճանաչված են իրենց արտադրանքներով, քան մշակույթով: Այսպիսով, մրցունակ ապրանքների արտահանման ընդլայնումը կնպաստի Հայաստանի միջազգային ճանաչման ընդլայնմանը:

6 «...եթե աճի տեմպերը պահպանվեն, իսկ արտահանումը չավելանա, Հայաստանը ստիպված կլինի տարեկան բյուջեի 25 տոկոսն ուղղել միայն արտաքին պարտքի սպասարկմանը: Միտումը կանխորոշում է, որ արտաքին պարտքը տարեկան կաճի 250 միլիոն ԱՄՆ դոլարով»: Ռիչարդ Գիրագոսյան, «Աբթ Ասոշիեյթս» Inc. վերլուծաբան, «Ուսուցում Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների փորձագետների համար», 2004թ., ԵԱՀԿ, էջ 206:

## Նպատակը և սկզբունքները

Սույն հայեցակարգի նպատակն է ձևակերպել արտահանումը խթանող միջոցառումների հիմնական ուղղությունները և մեխանիզմները, ինչպես նաև՝ դրանց մշակման սկզբունքները, որի հիման վրա կարելի լինի մշակել և իրականացնել «Արտահանման խրախուսման ազգային ռազմավարական ծրագիր»: Այն պետք է հանդիսանա ՀՀ Կառավարության կողմից իրականացվող քաղաքականության լրացում՝ ուղղված արտահանման խրախուսմանը, ինչը դիտարկվում է որպես տնտեսական քաղաքականության գերակայություն:

«Արտահանման խրախուսման ազգային ռազմավարական ծրագիրը» (այսուհետ՝ ԱԽԾ) պետք է մշակվի և իրականացվի հետևյալ սկզբունքների հիման վրա.

- Ազատ մրցակցային հարաբերություններ: Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող ցանկացած քաղաքականություն, այդ թվում նաև արտահանման խրախուսմանն ուղղված քաղաքականությունը և միջոցառումները չպետք է հակասեն որդեգրած ազատ շուկայական հարաբերությունների հիմնական սկզբունքներին, որոնցից առանցքայինն ազատ մրցակցային հարաբերությունների պաշտպանումն է: Արտահանման խթանմանն ուղղվող միջոցառումները պետք հավասարապես ծառայեն բոլոր շահառուների, տվյալ դեպքում՝ արտահանողների շահերին, և բացառեն որևէ խտրական մոտեցում:

- Գերակայությունների համապատասխանություն: ԱԽԾ-ն չպետք է հակասի Կառավարության կողմից որդեգրված տնտեսական բարեփոխումների գերակայություններին և աղքատության հաղթահարման և հակակոռուպցիոն ռազմավարություններին: Ավելին, այս Ծրագիրը պետք է նպաստի երկրում սոցիալական և տնտեսական զարգացման այլ ծրագրերի նպատակների իրականացմանը:

- Տնտեսապես արդարացվածություն: Արտահանման խրախուսմանն ուղղված միջոցառումների առաջնահերթությունները պետք է հիմնավորվեն իրենց տնտեսական արդյունավետությամբ: Մասնավորապես իրականացվող քաղաքականության առաջնահերթ օբյեկտ պետք է հանդիսանան ներքին տնտեսության այն ոլորտները, որոնք ունեն հարաբերական առավելություններ: Իրականացվող քաղաքականության և միջոցառումների արդյունքները պետք է լինեն իրատեսական և կանխատեսելի:

- Թափանցիկություն, հաշվետվողականություն և մասնակցայնություն: ԱԽԾ-ն պետք է մշակվի ժողովրդավարական մշակույթի տարրերին համապատասխան՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը և բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությունը ծրագրի մշակման և հետագայում իրականացման գործընթացներին: Կառավարությունը պետք է մշակի հստակ միջոցառումների ժամանակացույց և պարբերաբար ներկայացնի ծրագրի կատարման առաջընթացի հաշվետվություն: Բիզնես միությունները և քաղաքացիական հասարակության կառույցները պետք է մասնակցեն նաև ծրագրի պարբերական վերանայման և միջոցառումների թարմացման գործընթացին, ինչպես նաև ծրագրի իրականացման առաջընթացի մոնիտորինգի և գնահատման գործընթացներին:

## Առաջարկվող ուղղությունները

«Արտահանման խրախուսման ազգային ռազմավարական ծրագրի» հայեցակարգը նախատեսում է երկու հիմնական ուղղություններ՝ ա) նպաստել տնտեսության մրցունակության աճին և արտահանման ընդհանուր պայմանների բարելավմանը, բ) նպաստել արտահանման նպատակային ոլորտների զարգացմանը:

### 1. Մրցունակության աճ և արտահանման ընդհանուր պայմանների բարելավում

ԱԽԾ-ի հիմնական ծրագրային ուղղությունն է նպաստել Հայաստանում մրցունակ ձեռնարկությունների աճին և ձեռներեցության ու արտահանման ընդհանուր պայմանների բարելավմանը: Այս իմաստով հարկ է իրականացնել մի շարք առանձին համալիր ծրագրեր, որոնք կառաջարկվեն և պարբերաբար կթարմացվեն ըստ ԱԽԾ-ի վերջնական տարբերակի: Ընդհանուր առմամբ դրանք պետք է վերաբերվեն և ներառեն հետևյալները.

- **Մակրոտնտեսական բարենպաստ միջավայրի պահպանում**
  Արտահանման համար խիստ կարևոր նշանակություն ունի բարենպաստ մակրոտնտեսական միջավայրը: Անհրաժեշտ է պահպանել երկրում տնտեսական և ֆինանսական կայունությունը, որը նպաստավոր կլինի թե՛ ներքին, և թե՛ միջազգային առևտրատնտեսական գործունեության համար: Գնային փոփոխականների և ֆիսկալ դեֆիցիտի կայունությունն ապահովելուց զատ՝ արտահանման խրախուսման տեսանկյունից կարևորվում է նաև իրական փոխարժեքի դինամիկան:

- **Օրենսդրական, հարկային և մաքսային դաշտի բարեփոխումներ**
  Չնայած Հայաստանում արտահանումն ըստ էության ազատականացված է և ենթակա չէ հարկման, այնուամենայնիվ, այս ոլորտը նույնպես օրենսդրական հետագա բարելավման և ճշգրտման կարիք ունի: Հարկավոր է ստեղծել օրենսդրական հիմքեր՝ արտահանողներին և արտահանմանն անուղղակի աջակցելու առումով[7]: Անհրաժեշտ է հնարավորինս պարզեցնել արտահանման մաքսային գործավարությունը, վերացնել բյուրոկրատական և կոռուպցիոն խոչընդոտները:

- **Արտաքին տնտեսական քաղաքականության ակտիվացում**
  Արտաքին առևտրի քաղաքականության առավել արդյունավետ գործիքակազմն այսօր որոշակիորեն միտված է արտահանման խթանմանը: Խոսքը վերաբերում է մաքսատուրքերին և հարկերին, որից արտահանումն ազատված է (չնայած վերջինիս հետ կապված խնդիրներին): Սակայն Կառավարությունը պետք է առավել ակտիվորեն մասնակցի արտաքին ապրանքաշրջանառության, մասնավորապես արտահանման խթանմանը՝ գործարկելով արտաքին տնտեսական քաղաքականության բոլոր հնարավոր լծակները, որոնք չեն հակասում շուկայական հարաբերությունների սկզբունքներին:

  Համաշխարհային առևտրի կազմակերպությանն անդամակցումը բավականին կարևոր և անհրաժեշտ քայլ էր, բայց դեռևս ոչ բավարար՝ արտահանման ցանկալի ծավալներ ապահովելու համար:

  Արտահանումը, որպես երկրի թիվ մեկ տնտեսական գործունեություն, պետք է իրականացվի հնարավորինս պարզեցված վարչական գործընթացներով և լինի պետության ուշադրության կենտրոնում՝ պոտենցիալ բյուրոկրատական խոչընդոտները վերացնելու առումով:

  Կառավարությունը պետք է լայնորեն օգտագործի միջպետական համաձայնագրերի ինստիտուտը՝ ներքին արտադրանքն արտահանելու համար: ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները պետք է առավելագույնս ակտիվացնեն իրենց տնտեսական գործառույթները, որոնք պետք է համակարգեն և ապահովեն հայկական ապրանքների և ծառայությունների առաջխաղացումն իրենց լիազորության երկրում կամ տարածաշրջանում:

7 Խոսքը վերաբերում է նաև այնպիսի խոչընդոտների վերացմանը, ինչպիսին է, օրինակ, արտահանման ժամանակ ավելացված արժեքի գծով առաջացող գերավճարի մարման (հետ վերադարձման) հարցը և այլն:

- **Տարածաշրջանային ինտեգրացիայի խորացում**

Հայաստանը շատ օտարերկրյա գործարարների մոտ ասոցացվում է փոքր և ոչ նշանակալի երկրի հետ: Հարավային Կովկասի երկրների տնտեսական օրենսդրության նույնացումը կբերի ընդհանուր մոտեցման գաղափարին, որը երկարաժամկետ մեծ առավելություն կունենա տարածաշրջանի երկրների համար: Այս մոտեցումն ընդունելի է մասնավորապես Վրաստանի հետ հարաբերություններում, քանի որ Վրաստանի տնտեսական քաղաքականությունը ներկայում հիմնված է ազատականացման նույն սկզբունքների վրա, ինչ և Հայաստանինն է, և երկու պետությունները էլ հանդիսանում են Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ երկրներ: Հարկ է նաև նշել, որ վերջին տարիներին նկատվում է Հայաստանից Վրաստան արտահանվող տեսականու ընդլայնում, և նմանատիպ միջոցառումները ուղղակի կնպաստեն արտահանման ծավալների աճին:

- **Ճանապարհների, արտահանման տրանսպորտային ուղիների բարելավում**

Տարածաշրջանային ինտեգրացումն էապես կնպաստի նաև Հայաստանի արտաքին տրանսպորտային ուղիների բարելավմանը: Արտաքին տրանսպորտային ուղիների սակավության խնդիրն այսօր առավել խոչընդոտող է արտահանման ավելացման համար: Միջպետական նշանակության ճանապարհների և երկաթուղային տրանսպորտի սպասարկման միջազգային չափանիշների ապահովումը պետք է ռազմավարական գերակայություն դառնա: Կարևորվում են նաև տարածաշրջանային նոր տրանսպորտային ուղիների ստեղծման և դրանցում Հայաստանի մասնակցության գործընթացները: Այս իմաստով հարկ է գործուն և իրական մասնակցություն ապահովել հարցին վերաբերող միջազգային և տարածաշրջանային համապատասխան կառույցների աշխատանքներին:

Անհրաժեշտ է չափազանց մեծ կարևորություն տալ այս խնդիրներին, և մշակել արտաքին տրանսպորտային ուղիների բարելավման ռազմավարական ծրագիր: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել Հայաստանը Սև ծովի հետ կապող տրանսպորտային ուղիներին, և Թուրքիայի հետ սահմանի բացման խնդրի հնարավոր ելքերին:

- **Ֆինանսավորման այլընտրանքային ձևերի և ինստիտուտների կազմավորում**

Ֆինանսաբանկային ինստիտուտների զարգացման ներկա պայմաններում, երբ բանկերն ակտիվորեն չեն իրականացնում տնտեսության վարկավորման ծրագրեր և խուսափում են ֆինանսավորման զանազան

սխեմաներին մասնակցելուց, արտահանող կազմակերպությունները մեծ դժվարություններ ունեն ազատ ֆինանսական միջոցների ձեռքբերման և շրջանառու միջոցների պակասը լրացնելու հարցում: Ֆինանսավորման այլընտրանքային ձևերի և ինստիտուտների առկայությունը կնպաստի տնտեսական գործունեության աշխուժացմանը և ընդհանուր արտադրողականության բարձրացմանը:

Անհրաժեշտ է արտահանողներին ապահովել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման, արտադրանքի և փաթեթավորման որակի բարձրացման, ստանդարտների և պատենտների ձեռքբերման, կադրերի վերապատրաստման, նոր տեղեկատվական համակարգերի ներդրման, մարքեթինգային ծախսերի, ցուցահանդեսների և տոնավաճառների մասնակցության ծախսերի ֆինանսավորման համար արտոնյալ վարկերի և գրանտների ստացման հնարավորություններով:

Արտահանման և արտահանման վարկավորման ապահովագրության համակարգի մշակումը և համապատասխան ինստիտուտների ձևավորումը կհանդիսանան արտահանման խթանման կարևոր լծակներ:

- **Մարքեթինգ և հայկական բրենդի գովազդ**

Պետությունը պետք է նախատեսի իրականացնել որոշակի գործողություններ և միջոցառումներ կապված արտաքին աշխարհում Հայաստանի ընկալումը որակապես բարելավելու հետ: Հայաստանը դրսում չի ընկալվում որպես բարձրորակ և ժամանակակից ապրանքներ թողարկող երկիր և չունի ձևավորված իմիջ:

Անհրաժեշտ է իրականացնել հայկական ապրանքանիշի (brand) ձևավորման պետական քաղաքականություն: Պետական մարմինները պետք է մշակեն հայկական ապրանքանիշի ձևավորման քաղաքականությունը և հնարավորինս գովազդեն հայրենական արտադրությունը բոլոր հնարավոր օղակներով:

Հայաստանում համաշխարհային ճանաչում ունեցող բրենդի արտադրությունը և դրա գովազդը նույնպես էապես կփոխի համաշխարհային շուկայի մոտեցումը հայկական ապրանքներին:

- **Կառավարման և բիզնեսի կուլտուրայի ներդրում, կարողությունների հզորացում**

Անհրաժեշտ է կառավարման և բիզնեսի կուլտուրայի առաջադիմական փորձի ներդրում հայրենական գործարարների շրջանակներում:

Հայաստանում ժամանակակից մենեջմենթի և կառավարման կուլտուրայի սկզբունքների բացակայությունն արտերկրում ձևավորում է բացասական իմիջ հայկական արտադրության ապրանքների և ձեռնարկների նկատմամբ: Այդ սկզբունքների ներդրումը հայ գործարարների մոտ էապես կբարձրացնի արտադրության կազմակերպման մակարդակը և արդյունավետությունը, կնպաստի օտարերկրյա գործարարների հետ տնտեսական կապերի հաստատմանը:

Հարկավոր է կազմակերպել դասընթացներ, կադրերի վերապատրաստման և ուսուցման ծրագրեր, որոնք ընդհանուր առմամբ կնպաստեն ներքին կարողությունների աճին, ինչպես և ֆինանսական, վարչական և ծրագրային կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը:

- **Կրթության և գիտության որակի բարձրացում**

Համաշխարհային շուկայում մրցակցային ապրանքի արտադրության և երկարաժամկետ հատվածում մրցակցային դիրքերը բավարարելու համար անհրաժեշտ է ապահովել համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացին համընթաց քայլերի և առաջընթացի արդյունքները յուրացնող դաշտի ապահովում: Վերջինն իր հերթին ենթադրում է արհեստավարժ, խորը մասնագիտական գիտելիքներով հարուստ աշխատանքային ռեսուրսներ և դրանց վերարտադրության պայմանների ապահովում, ժամանակակից գիտության և տեխնոլոգիաների կիրառում և արտադրություն: Այս իմաստով կարևորվում է գիտության և մասնագիտական կրթության նկատմամբ համընդհանուր ուշադրության բարձրացումը:

- **Տեղեկատվության մատչելիություն**

Տեղեկատվության անհասանելիությունը, որը դրսևորվում նաև բացակայությունը, կարող են դառնալ արտահանման տեխնիկական խոչընդոտներ[8], որոնք, գործարարների համար հանդիսանալով լրացուցիչ ծախսեր, կարող են հանգեցնել արտահանման գործարքների խափանման կամ ծավալների կրճատման: Մասնավորապես հարկ է ապահովել տարբեր երկրների օրենսդրությունների, գործարար պրակտիկայի և սոցիալ-մշակութային հարցերի շուրջ տեղեկատվության մատչելիություն, ինչպես նաև վիճակագրություն և միջազգային կազմակերպությունների վերաբերյալ գիտելիքներ:

Միաժամանակ պետք է ապահովել արտահանող-գործարարների միջև կապը, հավաքագրել և ամփոփել արտահանողներից (և ընդհանրա-

8 Այս հարցի ուսումնասիրությունն առավել մանրամասն ներկայացված է UNDP կողմից ներկայացված «Technical Barriers to Trade. Armenian Prospect» զեկույցում, Երևան 2004:

ղես ձեռնարկներից) ստացվող տեղեկությունները և առաջարկները, կազմակերպել բաց քննարկումներ:

- **Ստանդարտացում և սերտիֆիկացիա**
  Ստանդարտացման և սերտիֆիկացման ոլորտում անհրաժեշտ է պետական մարմինների կողմից ակտիվ ջանքեր կատարել միջազգային ստանդարտների ներդրման ուղղությամբ՝ ինչպես առանձին ձեռնարկությունների աջակցելու միջոցով, այնպես էլ գործող ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ճանապարհով (ժամանակակից լաբորատորիաների ներդրում, միջազգային պայմանագրերի կնքում՝ սերտիֆիկացման միջազգային կազմակերպությունների և առանձին պետությունների հետ հայկական ստանդարտների համակարգը ճանաչելու նպատակով, Հայաստանում միջազգային սերտիֆիկացման համակարգերի ներկայացուցչությունների բացման աջակցություն):

  Անհրաժեշտություն կա նաև աջակցել հայկական ձեռնարկություններին՝ արտասահմանյան պատենտներ և սերտիֆիկատներ ստանալու ակտիվացմանը:

## *2. Արտահանման նպատակային ոլորտների զարգացում*

Հայտնի է, որ տնտեսությունները տարբերվում են իրենց արտադրական հնարավորություններով ոչ միայն բացարձակ իմաստով, այլ նաև՝ համեմատական: Այսինքն, կախված տնտեսության առանձնահատկություններից՝ ակտիվահագրական, ժողովրդագրական, կառուցվածքային և այլ, տնտեսությունն այս կամ այն ոլորտում կարող է համեմատական առավելություններ ունենալ մյուս տնտեսությունների նկատմամբ: Տնտեսության տվյալ ճյուղի համեմատական առավելությունը լավագույն նախադրյալ է՝ այդ ճյուղի արտադրանքը միջազգային շուկաներ արտահանելու համար: Այլ հավասար պայմաններում արտահանման խրախուսումն առավել արդյունավետ կլինի համեմատական առավելություններով օժտված ճյուղերում, որոնք և պետք է դիտվեն որպես արտահանման նպատակային ոլորտներ:

ԱԽԾ-ն պետք է նախատեսի միջոցառումներ, որոնք կնպաստեն Հայաստանում արտահանման նպատակային ոլորտների զարգացմանը: Այս միջոցառումները պետք է ունենան առավել հասցեական մոտեցում: Այս առումով նախ պետք է նպատակ, որպեսզի կառավարական և ոչ կառավարական ինստիտուտների կողմից տարբերաբար իրականացվեն.

- Հայաստանի ճյուղային և ռեսուրսային կառուցվածքի հետազոտություններ և ուսումնասիրություններ,
- համաշխարհային շուկայի ճյուղային զարգացման միտումների ուսումնասիրություններ,
- հեռանկարային ճյուղերի գնահատումներ և դրանց զարգացման հիմնախնդիրների վերլուծություններ,
- առանձին ճյուղերի ռազմավարական զարգացման ծրագրերի մշակումներ,
- տնտեսության ցանկալի ճյուղերի զարգացման և խթանման համար ինստիտուցիոնալ հիմքերի մշակումներ:

Պետք է ապահովվեն սրանց այլընտրանքային մոտեցումները և լայն մատչելիությունը: Այս ամենը կնպաստի և կօգնի համապատասխան ոլորտներում ներքևից արդյունավետ բիզնես-որոշումների կայացմանը:

Միաժամանակ պետք է իրազեկել և օգնել ձեռնարկություններին՝ ապահովելով արտաքին միջավայրի ուղղակի և անուղղակի ազդեցության գործոնների վերլուծություններ.

- ըստ առանձին ճյուղերի ուսումնասիրել ճյուղի արտադրանքը սպառող երկրների տնտեսական հեռանկարները, հումքային շուկաների միտումները և մատակարարող երկրները, մրցակից երկրների ուժեղ և թույլ կողմերը, միջազգային իրավական դաշտի զարգացումները, հնարավոր ազդեցությունը և այլն,
- վերլուծել համաշխարհային քաղաքական և տնտեսական զարգացումները,
- իրազեկել գիտատեխնոլոգիական առաջընթացի և երկրների սոցիալ-մշակութային զարգացումների մասին:

ԱԽԾ-ն պետք է ներառի նաև միջոցառումներ համապատասխան ոլորտներում՝ ուղղված պետական ծառայողների կրթության և իրազեկության մակարդակի բարձրացմանը:

## Առաջարկվող մեխանիզմները

Մի շարք զարգացած և զարգացող երկրներ մշակել և իրականացնում են արտահանման խրախուսման ծրագրեր[9]: Նման ծրագրերը մեծամասամբ իրականացվում են առանձնացված մարմնի՝ Արտահանման խրախուսման գործակալությունների միջոցով: Երկրների մեծ մասում ստեղծվում են նաև արտահանման տեղեկատվական կենտրոններ: Հենց այս կառույցներն էլ մեծամասամբ իրականացնում են Արտահանման խրախուսման ծրագրերը. աջակցում են ձեռնարկություններին, տրամադրում են դրամաշնորհներ՝ արտահանման նախապատրաստման գործունեության համար, աջակցում են ցուցահանդեսներին և տոնավաճառներին ձեռնարկությունների մասնակցությանը և այլն:

Հայաստանում արտահանման խրախուսման իրականացման համար անհրաժեշտ է սկսել «Արտահանման խրախուսման ազգային ռազմավարական ծրագրի» գործընթացը, որը պետք է ներառի առանձին փուլերի և գործողությունների հաջորդականություն: ԱԽԾ-ի գործընթացի իրականացման համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ նախապայմանները՝ քաղաքական կամք և պատրաստակամություն, ինստիտուցիոնալ մեխանիզմներ, ներկառավարական կոորդինացիա, դոնորների աջակցություն և ֆինանսական ապահովում:

**Քաղաքական կամք և պատրաստակամություն:** ԱԽԾ-ի իրականացման համար անհրաժեշտ է, որ Կառավարությունը և իշխող քաղաքական ուժերը կարևորեն և գիտակցեն այս ծրագրի իրականացման ռազմավարական անհրաժեշտությունը: Կառավարությունը պետք է ստանձնի նման ծրագրի մշակման և իրականացման պատասխանատվություն: Մյուս քաղաքական ուժերը պետք է դրսևորեն քաղաքական կամք և պատրաստակամություն՝ մասնակցելու և աջակցելու Հայաստանում «Արտահանման խրախուսման ազգային ռազմավարական ծրագրին»: Այս առումով հարկավոր է լայնորեն քննարկել արտահանման խրախուսման խնդիրները և լուսաբանել դրա անհրաժեշտությունը՝ կիրառելով լոբբինգի և ազդեցության մեխանիզմներ՝ արտահանման խրախուսումը տնտեսության խթանման քաղաքականության օրակարգ մտցնելու համար:

**Ինստիտուցիոնալ մեխանիզմներ:** ԱԽԾ-ի իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան ինստիտուցիոնալ հիմքեր և մեխանիզմներ: Դրանք կարող են վերաբերել ինչպես օրենսդրա-

9 Ուսումնասիրվել է Էստոնիայի, Ֆինլանդիայի, Մեծ Բրիտանիայի, Թուրքիայի, Հունաստանի, Ռումինիայի, Չեխիայի, Իռլանդիայի, Իտալիայի, Շվեդիայի, ԱՄՆ-ի և Հարավային Կորեայի փորձը:

կան և ենթաօրենսդրական ակտերի ընդունմանը, այնպես էլ Ծրագրի համակարգող մարմնի, աշխատանքային խմբերի և ծրագրերի իրականացման մարմինների ստեղծմանը:

Առաջարկվում է, որ ԱԽԾ-ի գործընթացի ընդհանուր համակարգումն իրականացվի ՀՀ Նախագահին կից ստեղծվող Արտահանման խրախուսման ազգային խորհրդի կողմից, որը կներառի Հայաստանից և Սփյուռքից հեղինակավոր անձանց և ինստիտուտների: Արտահանման խրախուսման ազգային խորհուրդը պետք է հանդիսանա ԱԽԾ-ի գերագույն մարմինը, որը և կհաստատի ԱԽԾ-ն, դրա տարեկան առաջընթացի հաշվետվությունները և կկայացնի ռազմավարական որոշումներ՝ գումարվելով տարեկան 1-2 անգամ կամ ըստ անհրաժեշտության:

ԱԽԾ-ն պետք է մշակվի և պարբերաբար թարմացվի աշխատանքային փորձագիտական խմբերի կողմից, որի համակարգումը պետք է իրականացնի ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը՝ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի, գործարարների միությունների, գիտական և փաստաբանական հասարակության այլ ինստիտուտների մասնակցությամբ:

ԱԽԾ-ի իրականացման առանձին գործառույթներ և միջոցառումներ կարող են իրականացվել ՀՀ նախարարությունների և գործակալությունների, ինչպես նաև ոչ կառավարական ինստիտուտների և մարմինների կողմից: ԱԽԾ-ի իրականացման հիմնական դերակատարումը, անհրաժեշտության դեպքում, կարող է վերապահվել նաև առանձին գործակալության, որը կարող է լինել Հայկական զարգացման գործակալությունը կամ ձեռներեցության, բիզնեսի զարգացմանը և ներդրումների աջակցմանն ուղղված այլ ինստիտուտներ՝ կատարելով համապատասխան փոփոխություններ դրանց կանոնադրություններում:

**Ներկառավարական կոորդինացիա:** ԱԽԾ-ի իրականացման համար անհրաժեշտ է համակարգել տարբեր պետական մարմինների գործառույթները, մասնավորապես, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, ՀՀ հարկային պետական ծառայության և ՀՀ մաքսային պետական կոմիտեի, ՀՀ արտաքին գործերի նախարարության, ՀՀ էներգետիկայի նախարարության և այլն: Այս կառույցները նախ ակտիվորեն պետք է ներգրավված լինեն ծրագրի մշակման գործընթացում, ապա պետք է ապահովեն ծրագրի միջոցառումների ներառումն իրենց գործառույթների մեջ: Միաժամանակ նախարարությունները և գոր-

ծակալությունները պետք է ապահովեն ծրագրի իրականացման միասնական հաշվետվությունը:

**Դոնորների հանրության աջակցություն:** Կարևոր է միջոցներ ձեռնարկել՝ դոնոր հանրությանը ներգրավելու առումով, որպեսզի դրանց կողմից իրականացվող ծրագրերում համակարգվեն և տեղ գտնեն աղքատության խափանման ծրագրերը: Դոնորները կարող են նաև անմիջական մասնակցություն ունենալ ծրագրի իրականացման գործընթացին՝ ապահովելով առանձին գործողությունների անմիջական իրականացում կամ ֆինանսավորում:

**Ֆինանսական ապահովում:** Ծրագրի իրականացումը վերջին հաշվով պայմանավորված է ֆինանսական ապահովմամբ: Անհրաժեշտ է մշակել համապատասխան մեխանիզմներ տարբեր աղբյուրներից ծրագրի ֆինանսավորումն ապահովելու համար: ԱԽՌ-ն պետք է ներառված լինի բյուջետային գործընթացում և ստանան ֆինանսավորում ստանա պետական բյուջետային միջոցներից: Ծրագիրը կարող է ֆինանսավորվել (այդ թվում՝ նպատակային) նաև դոնորների, միջազգային կառույցների, տեղական և սփյուռքահայ գործարարների, առանձին անձանց և ինստիտուտների կողմից: Այս մասով ծրագրերը կարող են ներառված լինել կա՛մ պետական բյուջեում, կա՛մ իրականացվել առանձնացված հաշվառում ունեցող գործակալության կողմից:

**ԱԽՌ-ի գործընթացի փուլերը և ժամանակացույցը:** ԱԽՌ-ի գործընթացի առաջին փուլը «Քաղաքական կամքի դրսևորման և պատասխանատվության ստանձնման» փուլն է: Մինչ այս արդեն իսկ լայնորեն քննարկված և վերամշակված սույն Հայեցակարգը կներկայացվի քաղաքական կուսակցություններին և Կառավարությանը: Այս փուլի ավարտին քաղաքական կուսակցությունները պետք է քաղաքական կամք դրսևորեն գործընթացի իրականացման համար, և Կառավարությունը պետք է ստանձնի գործընթացը նախաձեռնելու պատասխանատվությունը:

Երկրորդ փուլը ԱԽՌ-ի մշակման փուլն է, որի ընթացքում կստեղծվեն համապատասխան ինստիտուցիոնալ հիմքերը, կսկսվի համագործակցությունը տարբեր շահառուների և դոնորների հետ, կմշակվի բուն ծրագրի վերջնական նախագիծը:

Երրորդ փուլով կհաստատվի ծրագիրը, կմշակվեն դրա իրականացումն ապահովող մեխանիզմները, կսկսվի դրա իրականացումը և մոնիտորինգը:

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Աղյուսակ 1.

## Հայաստանի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

| | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Թողարկում և համախառն եկամուտ** | | | | | | | |
| Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ) | 955.4 | 987.4 | 1,031.3 | 1,195.2 | 1,362.5 | 1,624.6 | 1,896.4 |
| Համախառն ազգային տնօրինվող եկամուտ (մլն ԱՄՆ դոլար) | 2,130.1 | 2,074.5 | 2,152.5 | 2,390.9 | 2,637.8 | 3,118.9 | 3,926.6 |
| Մեկ շնչի ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)* | 584.4 | 571.0 | 592.4 | 669.7 | 739.6 | 874.5 | 1,106.7 |
| Մեկ շնչի ընկնող ՀՆԱ (միջազգային դոլար)** | 2,319.9 | 2,266.8 | 2,351.8 | 2,658.8 | 2,936.3 | 3,471.7 | 4,393.7 |
| Տնտեսական աճ (տոկոս) | 7.3 | 3.3 | 5.9 | 9.6 | 13.2 | 14.0 | 10.1 |
| Արդյունաբերության կշիռը ՀՆԱ-ում (տոկոս) | 19.9 | 21.2 | 21.9 | 19.8 | 18.9 | 19.3 | 19.1 |
| Ապրանքների (ՖՕԲ) արտահանման կշիռը ՀՆԱ-ում (տոկոս) | 11.7 | 12.6 | 15.7 | 15.9 | 21.3 | 24.4 | 20.1 |
| **Գներ և փոխարժեք** | | | | | | | |
| ՀՆԱ-ի դեֆլյատոր (տոկոս) | 10.7 | 0.1 | -1.4 | 5.8 | 0.7 | 4.6 | 6.0 |
| Սղաճ (ժ/շ միջին, տոկոս) | 8.7 | 0.6 | -0.8 | 3.1 | 1.1 | 4.7 | 7.0 |
| Սղաճ (ժ/շ վերջ, տոկոս) | -1.3 | 2.0 | 0.4 | 2.9 | 2.0 | 8.6 | 2.0 |
| Փոխարժեք (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար, ժ/ջ միջին) | 504.9 | 535.1 | 539.5 | 555.1 | 573.4 | 578.8 | 533.5 |
| Փոխարժեք (ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար, ժ/շ վերջ) | 522.0 | 523.8 | 552.2 | 561.8 | 584.9 | 566.0 | 485.8 |
| **Համախմբված բյուջե** | | | | | | | |
| Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ (մլրդ դրամ) | 198.8 | 226.5 | 204.8 | 228.7 | 266.3 | 343.8 | 359.7 |
| Ծախսեր (մլրդ դրամ) | 233.8 | 280.2 | 254.4 | 278.1 | 299.8 | 364.6 | 401.1 |
| Դեֆիցիտ (տոկոս ՀՆԱ-ում) | 3.7 | 5.4 | 4.8 | 4.1 | 2.5 | 1.3 | 2.2 |
| **Դրամական հատված** | | | | | | | |
| Փողի զանգված (ժ/շ վերջ, մլրդ դրամ) | 97.1 | 111.1 | 151.7 | 172.2 | 203.1 | 233.8 | 285.9 |
| Փողի զանգվածի շրջապտույտի արագություն | 11.9 | 10.1 | 8.6 | 7.7 | 8.3 | 8.1 | 7.9 |
| Բանկային համակարգի զուտ արտաքին ակտիվներ (ժ/շ վերջ, մլրդ դրամ) | 16.4 | 30.0 | 56.2 | 73.2 | 148.9 | 197.8 | 223.4 |
| ՀՀ ԿԲ զուտ արտաքին ակտիվներ (ժ/շ վերջ, մլրդ դրամ) | 49.8 | 52.3 | 70.5 | 81.6 | 123.7 | 157.8 | 168.9 |
| ՀՀ ԿԲ համախառն արտաքին ակտիվներ (ժ/շ վերջ ներառյալ սեփ. միջոց., մլն ԱՄՆ դոլար) | 335.4 | 332.2 | 330.5 | 333.0 | 441.6 | 510.2 | 575.1 |

| | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Արտաքին հատված (ՀՆԱ-ի նկատմամբ, տոկոս)** | | | | | | | |
| Ընթացիկ հաշվի հաշվեկշիռ | -21.3 | -16.6 | -14.6 | -9.3 | -6.2 | -6.8 | -4.7 |
| Առևտրային հաշվեկշիռ | -30.5 | -25.7 | -24.2 | -19.5 | -15.5 | -15.5 | -13.1 |
| Ապրանքների և ծառայությունների արտահանում | 19.0 | 20.8 | 23.4 | 25.1 | 29.4 | 32.2 | 27.3 |
| Ապրանքների և ծառայությունների ներմուծում | 52.8 | 49.8 | 50.5 | 45.4 | 46.6 | 50.1 | 42.4 |
| Արտաքին պետական պարտք (առանց երաշխիքների) | 28.9 | 34.3 | 34.1 | 31.8 | 33.4 | 31.1 | 26.9 |
| Արտաքին պետական պարտքի (առանց երաշխիքների) սպասարկումը բյուջեի եկամուտների նկատմամբ (տոկոս) | 21.3 | 7.2 | 3.9 | 8.4 | 8.3 | 15.7 | 9.0 |

* Հաշվարկները հիմնված են մշտական բնակչության թվաքանակի վրա:
Աղբյուր՝ «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու», ՀՀ ԱՎԾ, 2004
** Հաշվարկներում PPP ընդունված է 3.97:
Աղբյուր՝ «World Development Indicators», Համաշխարհային Բանկ

Աղյուսակ 2.
### *Տնտեսության հիմնական ճյուղերը*

| | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Տնտեսական աճ՝ տոկոսով նախորդ տարվա նկատմամբ** | | | | | | | |
| **ՀՆԱ** | **7.3** | **3.3** | **5.9** | **9.6** | **13.2** | **14.0** | **10.1** |
| Արդյունաբերություն | -2.2 | 5.4 | 6.6 | 3.9 | 13.9 | 15.6 | 2.1 |
| Գյուղատնտեսություն | 12.9 | 1.4 | -1.1 | 11.7 | 3.8 | 4.2 | 14.5 |
| Շինարարություն | 10.6 | 7.7 | 28.9 | 4.8 | 41.5 | 45.5 | 13.4 |
| Ծառայություններ | 4.3 | 4.6 | 3.5 | 11.1 | 11.5 | 10.2 | 12.4 |
| Զուտ անուղղակի հարկեր | 22.9 | -4.0 | 13.6 | 16.9 | 14.3 | 7.9 | 2.4 |
| **Անվանական ՀՆԱ-ի կառուցվածքը՝ տոկոս** | | | | | | | |
| **Անվանական ՀՆԱ** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |
| Արդյունաբերություն | 19.9 | 21.2 | 21.9 | 19.8 | 18.9 | 19.3 | 19.1 |
| Գյուղատնտեսություն | 30.8 | 27.0 | 23.2 | 25.1 | 23.4 | 21.5 | 22.6 |
| Շինարարություն | 8.0 | 8.3 | 10.3 | 9.6 | 12.6 | 15.7 | 15.5 |
| Ծառայություններ | 32.0 | 35.1 | 35.5 | 36.0 | 35.4 | 34.4 | 34.4 |
| Զուտ անուղղակի հարկեր | 9.3 | 8.5 | 9.1 | 9.5 | 9.7 | 9.1 | 8.4 |

Աղյուսակ 3.
### *Անվանական ՀՆԱ-ի կառուցվածքն ըստ ծախսային բաղադրիչների*

| | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Տնտեսական աճ՝ տոկոսով նախորդ տարվա նկատմամբ** | | | | | | | |
| **ՀՆԱ** | **7.3** | **3.3** | **5.9** | **9.6** | **13.2** | **14.0** | **10.1** |
| Համախառն սպառում | 4.6 | 1.4 | 7.7 | 7.1 | 8.2 | 7.6 | 10.9 |
| Մասնավոր սպառում | 5.3 | 1.4 | 8.3 | 7.5 | 9.0 | 6.9 | 10.2 |
| Պետական սպառում | -2.2 | 1.3 | 2.8 | 4.3 | 2.2 | 14.1 | 16.2 |
| Համախառն ներդրումներ | 5.2 | -4.4 | 5.2 | 16.3 | 22.5 | 30.7 | 12.3 |
| Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանում | -6.6 | -10.7 | -1.2 | -11.3 | -1.8 | 22.2 | -5.6 |
| **Անվանական ՀՆԱ-ի կառուցվածքը՝ տոկոս** | | | | | | | |
| **Անվանական ՀՆԱ, այդ թվում** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** | **100.0** |
| Համախառն սպառում | 111.2 | 108.3 | 108.9 | 103.1 | 99.1 | 93.5 | 94.7 |
| Մասնավոր սպառում | 100.1 | 96.4 | 97.1 | 92.0 | 89.1 | 83.3 | 84.0 |
| Պետական սպառում | 11.1 | 11.9 | 11.8 | 11.1 | 10.0 | 10.2 | 10.7 |
| Համախառն ներդրումներ | 19.1 | 18.4 | 18.6 | 19.4 | 21.7 | 24.3 | 23.9 |
| Ապրանքների և ծառայությունների զուտ արտահանում | -33.8 | -29.0 | -27.2 | -20.3 | -17.2 | -17.9 | -15.1 |
| Վիճակագրական շեղում | 3.6 | 2.4 | -0.4 | -2.2 | -3.5 | 0.1 | -3.6 |

Աղյուսակ 4.
### *Վճարային հաշվեկշիռ (մլն ԱՄՆ դոլար)*

| | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Ընթացիկ հաշիվ** | **-402.9** | **-306.9** | **-278.3** | **-200.5** | **-148.0** | **-190.6** | **-167.0** |
| Առևտրային հաշվեկշիռ | -577.5 | -474.0 | -463.5 | -420.3 | -368.8 | -434.1 | -465.0 |
| *Արտահանում F.O.B.* | *220.5* | *231.7* | *300.5* | *341.8* | *505.2* | *685.6* | *715.0* |
| *Այլ արտահանում* | *8.4* | *15.6* | *9.4* | *11.3* | *8.6* | *10.5* | *15.4* |
| *Ներմուծում F.O.B.* | *-794.7* | *-697.3* | *-759.5* | *-754.0* | *-863.6* | *-1115.9* | *-1173.2* |
| *Հումանիտար օգնություն* | *-84.1* | *-63.9* | *-21.1* | *-130.5* | *-11.5* | *-42.9* | *-15.7* |
| *Այլ ներմուծում* | *-11.6* | *-24.0* | *-14.0* | *-19.4* | *-19.0* | *-14.4* | *-22.2* |
| Ծառայությունների հաշվեկշիռ | -63.2 | -62.0 | 55.8 | -17.8 | -40.7 | -68.3 | -73.6 |
| Զուտ գործոնային եկամուտներ | 60.4 | 54.9 | 52.9 | 63.6 | 88.1 | 93.4 | 41.9 |
| Զուտ ընթացիկ տրանսֆերտներ | 177.4 | 174.1 | 188.1 | 174.0 | 173.4 | 218.5 | 329.7 |
| *Պաշտոնական տրանսֆերտներ* | *112.7* | *93.8* | *102.5* | *71.9* | *54.7* | *60.2* | *60.3* |
| *Մասնավոր տրանսֆերտներ* | *64.7* | *80.3* | *85.6* | *102.1* | *118.7* | *158.3* | *269.4* |

| | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Կապիտալի և ֆինանսական հաշիվ** | **399.4** | **294.5** | **261.3** | **188.9** | **152.1** | **192.1** | **179.6** |
| Կապիտալ տրանսֆերտներ | 9.7 | 12.6 | 28.3 | 30.1 | 68.1 | 89.9 | 37.2 |
| Ֆինանսական հաշիվ | 389.6 | 281.9 | 233.0 | 158.8 | 84.0 | 102.2 | 142.4 |
| *Ուղղակի ներդրումներ* | *220.8* | *122.0* | *104.2* | *69.8* | *110.7* | *120.5* | *216.0* |
| *Պորտֆելային ներդրումներ* | *-15.9* | *1.6* | *-18.9* | *-5.7* | *1.5* | *0.3* | *-2.9* |
| *Այլ ներդրումներ* | *237.2* | *178.8* | *166.9* | *114.4* | *53.4* | *27.7* | *-45.2* |
| *Արտաքին պահուստների փոփոխություն* | *-52.5* | *-20.6* | *-19.2* | *-19.7* | *-81.7* | *-46.4* | *-25.5* |
| **Սխալներ և բացթողումներ** | **3.6** | **12.5** | **17.0** | **11.6** | **-4.1** | **-1.5** | **-12.6** |

Աղյուսակ 5.

***Ներմուծումն ըստ հիմնական գործընկեր երկրների (մլն ԱՄՆ դոլար)***

| | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Ներմուծում** | **902.4** | **811.2** | **884.7** | **877.4** | **987.2** | **1,279.5** | **1,351.0** |
| ***Ռուսաստանից*** | ***230.3*** | ***187.2*** | ***173.6*** | ***218.5*** | ***301.8*** | ***281.3*** | ***309.3*** |
| Ռուսաստան | 191.3 | 149.9 | 137.1 | 173.6 | 192.9 | 203.4 | 188.2 |
| Վրաստան | 26.8 | 26.7 | 19.6 | 18.5 | 31.5 | 33.0 | 49.4 |
| Թուրքմենստան | 0.5 | 0.8 | 1.1 | 0.8 | 25.0 | 0.1 | 1.1 |
| Այլ երկրներ | 11.7 | 9.8 | 15.7 | 25.5 | 52.5 | 44.9 | 70.7 |
| ***Ոչ ԱՊՀ երկրներից*** | ***672.2*** | ***624.1*** | ***711.1*** | ***658.9*** | ***685.3*** | ***998.2*** | ***1,041.7*** |
| ԱՄՆ | 96.3 | 85.6 | 102.6 | 84.2 | 52.7 | 111.2 | 101.1 |
| Բելգիա | 54.6 | 85.0 | 84.3 | 41.8 | 91.6 | 129.1 | 108.9 |
| Իրան | 63.9 | 78.4 | 82.2 | 78.1 | 62.6 | 70.2 | 72.7 |
| Մեծ Բրիտանիա | 69.0 | 66.9 | 59.4 | 91.2 | 28.1 | 83.3 | 97.9 |
| Արաբական Էմիրություններ | 54.4 | 40.2 | 41.6 | 47.4 | 42.9 | 60.5 | 60.6 |
| Թուրքիա | 56.7 | 40.2 | 40.4 | 33.8 | 40.4 | 36.7 | 38.2 |
| Գերմանիա | 34.0 | 34.2 | 36.3 | 34.0 | 42.9 | 43.8 | 74.0 |
| Իտալիա | 34.5 | 23.6 | 25.6 | 29.6 | 36.6 | 36.2 | 39.5 |
| Այլ երկրներ | 208.8 | 170.0 | 238.8 | 218.9 | 287.4 | 427.2 | 448.8 |

Աղյուսակ 6.

**_Արտահանումն ըստ հիմնական գործընկեր երկրների (մլն ԱՄՆ դոլար)_**

| | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Արտահանում** | **220.5** | **231.6** | **300.5** | **341.8** | **505.2** | **686.8** | **715.0** |
| ***ԱՊՀ երկրներից*** | ***80.6*** | ***56.2*** | ***73.4*** | ***89.1*** | ***96.3*** | ***129.1*** | ***124.2*** |
| Ռուսաստան | 40.0 | 33.7 | 44.6 | 60.5 | 64.6 | 94.4 | 78.0 |
| Թուրքմենստան | 22.6 | 5.9 | 5.5 | 0.8 | 2.8 | 3.6 | 0.6 |
| Վրաստան | 9.5 | 11.1 | 16.0 | 12.4 | 16.6 | 18.7 | 28.6 |
| Այլ երկրներ | 8.4 | 5.5 | 7.3 | 15.3 | 12.3 | 12.4 | 17.0 |
| ***Ոչ ԱՊՀ երկրներից*** | ***139.9*** | ***175.4*** | ***227.1*** | ***252.8*** | ***408.8*** | ***557.7*** | ***590.8*** |
| Բելգիա | 49.8 | 84.0 | 75.1 | 46.5 | 92.3 | 123.8 | 107.9 |
| Իրան | 31.5 | 34.0 | 30.1 | 31.9 | 31.5 | 22.5 | 28.1 |
| ԱՄՆ | 11.5 | 15.9 | 37.8 | 52.3 | 46.2 | 56.1 | 70.8 |
| Գերմանիա | 9.2 | 10.1 | 12.8 | 11.1 | 28.3 | 44.4 | 83.0 |
| Մեծ Բրիտանիա | 8.0 | 9.4 | 10.0 | 20.1 | 51.1 | 42.6 | 10.7 |
| Թուրքիա | 3.0 | 1.1 | 1.5 | 1.1 | 1.4 | 1.2 | 2.0 |
| Այլ երկրներ | 26.8 | 20.9 | 59.8 | 89.8 | 158.1 | 267.1 | 288.3 |

Աղյուսակ 7.

**_Ներմուծումն ըստ հիմնական ապրանքախմբերի (մլն ԱՄՆ դոլար)_**

| | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Ներմուծում** | **902.3** | **811.3** | **884.7** | **877.4** | **987.2** | **1,279.5** | **1,351.0** |
| Կենդանական ծագման արտադրանք | 47.0 | 41.5 | 33.9 | 30.8 | 27.7 | 32.8 | 39.7 |
| Բուսական ծագման արտադրանք | 117.7 | 75.7 | 99.3 | 85.2 | 74.4 | 75.0 | 106.9 |
| Պատրաստի սննդի արտադրանք | 110.1 | 77.0 | 69.6 | 76.9 | 79.3 | 93.3 | 112.3 |
| Հանքահումքային արտադրանք | 205.9 | 176.0 | 178.0 | 188.2 | 171.4 | 179.5 | 213.3 |
| Քիմիական արտադրանք | 73.7 | 71.4 | 82.3 | 65.1 | 62.8 | 78.4 | 84.4 |
| Մանածագործական իրեր | 31.7 | 30.0 | 32.4 | 36.0 | 36.1 | 39.8 | 47.1 |
| Թանկարժեք քարեր և մետաղներ | 45.5 | 86.7 | 113.3 | 106.8 | 213.5 | 333.1 | 296.8 |
| Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր | 20.2 | 23.8 | 24.4 | 36.1 | 55.7 | 76.7 | 59.7 |
| Մեքենասարքավորումներ և մեխանիզմներ | 78.9 | 86.5 | 117.3 | 88.4 | 103.4 | 133.8 | 133.2 |
| Տրանսպորտային միջոցներ | 47.3 | 33.1 | 22.6 | 25.9 | 39.9 | 78.5 | 93.3 |
| Այլ ապրանքներ | 124.2 | 109.5 | 111.8 | 138.2 | 123.0 | 158.7 | 164.4 |

Աղյուսակ 8.
**_Արտահանումն ըստ հիմնական ապրանքատեսակների (մլն ԱՄՆ դոլար)_**

| | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Արտահանում** | **220.4** | **231.7** | **300.5** | **341.8** | **505.2** | **685.6** | **715.0** |
| Պատրաստի սննդի արտադրանք | 16.7 | 16.0 | 27.3 | 48.0 | 54.8 | 72.2 | 69.4 |
| Հանքահումքային արտադրանք | 30.7 | 38.0 | 37.1 | 37.9 | 42.1 | 50.3 | 82.8 |
| Պլաստմասսա, կաուչուկ և ռետինե իրեր | 8.0 | 9.1 | 9.1 | 13.1 | 6.3 | 4.8 | 10.1 |
| Մանածագործական իրեր | 13.6 | 13.6 | 13.2 | 24.3 | 28.6 | 31.2 | 43.5 |
| Թանկարժեք քարեր և մետաղներ | 53.7 | 99.8 | 121.4 | 122.8 | 258.3 | 350.7 | 299.8 |
| Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր | 40.4 | 25.0 | 44.2 | 43.4 | 44.8 | 90.4 | 137.7 |
| Մեքենասարքավորումներ և մեխանիզմներ | 41.2 | 17.5 | 30.9 | 28.5 | 21.4 | 20.1 | 21.8 |
| Տրանսպորտային միջոցներ | 3.2 | 2.7 | 1.8 | 2.4 | 15.0 | 14.5 | 8.9 |
| Սարքեր և ապարատներ | 3.7 | 1.6 | 2.3 | 8.8 | 19.2 | 31.5 | 16.0 |
| Այլ ապրանքներ | 9.2 | 8.4 | 13.1 | 12.7 | 14.5 | 19.8 | 24.9 |

Գծանկար 1.
**_Ապրանքների և ծառայությունների արտահանումը և ներմուծումը (ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս)_**



Գծանկար 2.
***Արտահանման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի 2000 և 2004 թվականներին***




Գծանկար 3.
***Արտահանման կառուցվածքն ըստ երկրների 2000 և 2004 թվականներին***



«ՆԱՄԷ» տպագրատուն
ԵՐԵՎԱՆ 2006